

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маска».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէրէր).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են

իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կարող են արդեօք օգնել օտար դրամա-
գույնները.—Ներքին Տեսչութիւն. Մամուլ.
Ռուսաց թատրոն. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ Տեսչութիւն.
Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—Հե-
րոստիսիւն. — ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում.

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴԵՔՈՒ ԾՆԵՆԸ ՕՏԱՐ ԴՐԱՄԱՆ ՄԱՍԿԱՆԻՍԵՐԸ

Այժմ, երբ Ռուսաստանի բոլոր մասե-
րում և մասնաւորապէս Կովկասում զգաց-
վում է փողի պակասութիւն, նորից հան-
դէս է դառնում այն հարցը, թէ արդեօք
ցանկալի չէ, որ օտար դրամատէրերը բե-
րեն իրանց հետ մեծ դրամապահներ և
մտցնեն մեր արդիւնագործութեան մէջ:

Այդ հարցը տեղի է տալիս զանազան
մեկնութիւններին: Մի քանիսը տրամադիր
են կարծել, որ ներկայ տնտեսական տագ-
նապը հետեանք է օտար դրամապահներ
ի չափազանց մեծ քանակութեամբ երե-
ւալուն, որի պատճառով ամեն տեղ սկսվե-
ցին անսովոր ընդարձակ ձեռնարկութիւն-
ներ և դրանց հետ երեւան եկան չա-
փազանցած սպասելիքներ, երազական
հաշիւներ և այլ ճափով անհիմն գործառ-
նութիւններ:

Միւսները, ընդհակառակը, կարծում են,
որ միայն օտար դրամապահները երեւա-
լը մեղմացրեց և յետաձգեց տնտեսական
տագնապի արտայայտութիւնը, որ արդէն
տեղի ունէր Ռուսաստանում մի քանի տա-
րեկներից ի վեր: Օտար դրամատէրերը
բաւականանում են աւելի փոքր տոկոսով,
ուստի նրանք ուրախութեամբ գնում էին
այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք Ռու-
սաստանի արդիւնագործների համար ան-

ձեռնառու էին: Այդպիսով բազմաթիւ
անակոթութիւնների առաջն առնվեց, միայն
թէ արդիւնագործութեան մի նշանաւոր
մասն անցաւ օտարների ձեռքը:

Մենք մտադիր չենք զբաղվել օտար
դրամապահների կատարած գերի ըննու-
թեամբ բոլոր տեսակէտներից, բայց ան-
հրաժեշտ ենք համարում նկատել, որ օ-
տար դրամապահները մէջ անկասկած օգ-
տակէտ դեր են կատարում նրանք, որոնք
մտցնում են կատարելագործութիւններ
տեխնիկայի մէջ և նպաստում են ապրան-
քների վաճառահանութեանը: Դա շատ
կարեւոր հանգամանք է: Երբ օտար դրա-
մապահներ անկարող է ստեղծել արդիւն-
ների համար ձեռնառու վաճառահանու-
թիւն, նա չէ օգնում արդիւնագործու-
թեան և ինքն էլ դատապարտում է իրան
ոչնչացման:

Արդարեւ, եթէ Բագուի շրջանում, ուր
այժմ տիրում է տագնապ, մուտք գործեն
բազմաքանակ նոր դրամապահներ անկու-
տուրակայն երկրներից, օրինակ Բուխար-
այից, Պարսկաստանից, նրանք անկարող
կը լինէին հակառակ որ և է օգուտ տալ
տնտեսական կեանքին: Նոյն դերը կը կա-
տարեն այն եւրոպական դրամապահներ-
ը, որոնք մտադիր չեն այնպիսի բեղմնա-
ւոր եւ կուտարական դեր կատարել, ինչ-
պէս մի ժամանակ կատարեց, օրինակ, Նո-
բելը իր բերած և ժողոված դրամա-
պահներով:

Անկասկած եւրոպական դրամատէրերը
ամեն ջանք գործ կը դնեն իրանց սկսած
ձեռնարկութիւնը դարձնել զահաւէտ,
բայց մենք գիտենք և շատ չպահել, երբ
նրանք, նկատելով զգուշացման քիչ-քիչ
և ապագայ զոհարարութիւններ, թողնում
են սկսած գործը և հեռանում, զերադա-
սելով փոքր վնասը ապագայ մեծ վնասնե-

րին: Իսկ նրանց հեռանալով իրերը աւելի
ևս յուսահատ դիրք են ստանում և տեղի
առնալիս մի շարք անակոթութիւնների:

Այժմ եթէ օտար դրամապահները կա-
րողանային, օրինակ, Բագուի նաւթի հա-
մար կազմակերպել փոխադրութեան և
վաճառահանութեան մի առողջ սխեմա—
նրանք անկասկած էական ծառայութիւն
մատուցած կը լինէին մեր երկրի խոշոր
արդիւնագործութիւններից մէկը զարգաց-
ման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մեր ընթերցողների համար նորութիւն չէ
այն թշնամական վերաբերմունքը, որ վրաց
մամուլի մի մասը չարունակ առաջ է տանում
հայերի դէմ: Տարիներից ի վեր մի եւ նոյն
երգը, մի եւ նոյն ձանձրացող լաց ու կոծը
այն ժաման, թէ հայ ազգը վրաց ազգի անհաշ-
թ թշնամին է, չէ թոյլ տալիս նրան զարգանալ,
առաջանալ Նորութիւն չէ նոյնպէս եւ այն,
որ վրաց բեմի վրա, վրաց վիպագրութեան
մէջ չարունակ հայերը հրէշաւոր, զոհելի կեր-
պարանքի մէջ են դուրս բերվում ու ամեն
տեղ, ամեն քայլում անց էր կացնում այն
տենդենցիան, թէ պէտք է ատել հայերին,
վրացիները այդ անգութ, արհեստաւոր թշնա-
միւններն Շատ եւ անչափ շատ է խօսվել վրաց
ինտելիգենցիայի այդ արարքների դէմ, ազգա-
յին թշնամութիւն տարածելու տխուր եռանդը
շատ ու շատ անգամ է պախարակվել: Բայց
իզուր: Վրաց լալկան ինտելիգենցիայի մի մասը
կարծես ուրիշ նիւթ ունենալ չէ կարող իր
հայրենասիրական աւելի ցոյց տալու համար,
կարծես ուրիշ արժանաւոր առարկաների վրա
չէ կարող կենտրոնացնել իր ուշադրութիւնը:
Ահա «Ճնօրիս Փոքրէի» լրագիրը, այս տար-

վանից նա սկսեց հրատարակել մեծ դիրքով
և լայն ծրագրով, խոստանում էր լինել մի
առաջադէմ օրգան, հեռու ազգային նախապա-
շարմունքներից, լուրջ, քննադատող եւ ար-
դարադատ մի թերթ: Բայց առել հեշտ է,
կատարել է դժուար: Մի քանի ամիս հազիւ
անցաւ, եւ անա նրա մէջ սկսեցին լսվել նոյն
հին ձեռնչոյները, նոյն ախ ու վախերը, նոյն
դժոխքից օտական հրաւերները դէպի կոխ յա-
նուն ազգութեան, յանուն հայրենասիրութեան
կրկնել վրացի չօվնիստների այդ «նշխարներից»
գոնէ երկուսը-երեքը անկարելի է. նորութիւն
չը կայ, միշտ մի եւ նոյնն է, որ հողովում է
հայրա ու մի տեսակի էլ հին արձանագրու-
թիւնների ջնջելը, էլ նրանց տեղ հայերէն ար-
ձանագրութիւններ դնելը, էլ այն ողորմելի
միտքը, թէ հայերը վրաստանում անկող եւ
ապերախտ հիւրեր են, որոնց պէտք է դուրս
վռնգել:

Բայց շատ միեթարական է, որ վրաց մամուլը
ինտելիգենցիան չէ վարակված այդ թոյնով:
Մենք շատ անգամ ենք խօսել եւ հակառակ
ուղղութիւն ներկայացնողների մասին: Դրան-
ցից մէկն է եւ պ. Ի. Գոմարտելի, որի մի
գեղեցիկ յօդուածը մենք մեծ հաճութեամբ
կարդացինք «ՊՅՈՒՆ» լրագրի մէջ: Պա-
րոնը ապացուցանում է, որ հայերի եւ վրացի-
ների մէջ չը կայ եւ չէ կարող լինել ազգայ-
նական հակառակութիւն: Առաջին եւ ամենա-
մեծ ապացոյցը տալիս է մեզ հասարակ ժողո-
վուրդը: Նա, օրինակի համար, վերցնում է
Ալաւթաւաքի գաւառը, ուր հայերն ու վրացի-
ները ապրում են միասին:

Ինչպէս հայերը, նոյնպէս եւ վրացիները
պարագայում են բացառապէս երկրագործու-
թեամբ եւ հովուութեամբ: Ինչպէս հայերը,
նոյնպէս եւ վրացիները ապրում են միա-
նման տնտեսում, միատեսակ կեանք են վա-
րում, հազնվում են միատեսակ, ունեն միա-
տեսակ հայկազները, եւ նոյն իսկ սովորու-
թիւնների մէջ էլ նրանք շատ ընդհանուր
բաներ ունեն: Հայերից շատերը լաւ խօ-

լացի բանաւոր նոյն իսկ զգաւոր ժամանակ
միշտ զազազված, կատաղած է, ուր միայն թէ
հարբած ժամանակ, մասնաւոր՝ երբ իր առ-
ջեւ տեսնում է մի մաքուր հազնված մարդ:
Այդ եւս փորձով գիտէի դեռ Իտալիա մը մը-
տած: Իրանց երկրում տիրող տնտեսական
ողբալի կարգերի նորոգիչ շարքը կեանքի դա-
տապարտված այդ տաք, կենսալից, կրքոտ
մարդիկ իրանց արհեստի հարեւոր վերապատե-
ցիցին, օտարի լուծը հերոսաբար թօթափեցին
կարծես մի ոչ պակաս ծանր, անտեսական լծի
տակ կուսալուր համար: Հարուստ երկրի այս
քաղցած ժողովուրդը այժմ զայրոյթով է նա-
յում ամեն մէկին, որ հեռաւոր նմանութիւն
ունի, թէկու՛ղ իր արտաքինով, իր մի փոքր
մաքուր զգեստով, իր կեղծիքներին: Եւ իտա-
լացի բանաւորը միշտ կատաղած է, որովհետեւ
զրկված է. նա յաճախ է հարբած, որովհետեւ
ցաւի եւ զրկանքի դառն գիտակցութիւնը
խեղդել է հարկաւոր:

Ինձ ճանապարհորդակից այս երեք բանաւոր-
ների շարժումներն ու խօսակցութիւնը հրէշա-
ւոր լինելու չափ անտանելի են դառնում: Նը-
րանց այլանդակութիւններից զերծ չէ մնում
նաեւ իտալացի աղջիկը: Ինձ փրկում է այն
տխուր գիտակցութիւնը, թէ առկա երեք
մարդ չեն կանգնած, այլ մի ամբողջ դասա-
կարգ, միլիոնների կեղծեղած, տանջված խեղ-
ճերի, միշտ աշխատող եւ միշտ կարգի մէջ
խեղդված, որոնք իրանց վրէժնալիցութեան
մէջ կուրանալու եւ նոյն իսկ գարշելի դառ-
նալու բերտ իրաւունքն ունեն: Շվեյցարացի
բարեկամիս խօսքերը Իտալիայում երրորդ
կարգով չը ճանապարհորդելու մասին եւ յի-
շում եւ դառնութեամբ, սակայն դարձեալ չեմ
ցաւում նրա խորհրդին հետեւած չը լինելու
համար, կեանքն է այս, ուր փախչել եւ ին-
չու... քամիները կը բերեն հառաչանքի ձայ-
ները...

Ա. Ահարոնեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թոռնիկ տպաւորութիւններ)

II

Այս անգամ իմ ուղեկիցներն են մի իտալա-
ցի շահի աղջիկ, փոքրիկ, սեւաչեւայ ու շար-
ժուն, ինչպէս լինում են առնաւորակ իտա-
լուհիները, եւ մի խուճը գեղջկուհիներ: Ըու-
տով ներս են գալիս նաեւ իտալացի բանաւոր-
ներ. նրանք այնպիսի պայուսակներ ունեն, որ
նայելն անգամ նոյնանք է բերում: Աղքատու-
թիւնը թափվում է թէ զղաւթաբերական եւ թէ
կանանց զգեստներից, այդ չարչարված դէմ-
քերի արտայայտութիւնից: Մի երկրի ժողո-
վրդի բարեկեցիկ վիճակն ու խեղճութիւնը
զիւղական դասակարգով պիտի չափել, այն
մուծ ու մուրար ամբողջով, որ իր իսկական
վիճակը, իր խեղճութիւնը ծածկելու արուեստ-
աւ չը գիտէ, եւ չէ իմացել երբեք: Շվեյցա-
րիայում երկաթուղու երրորդ կարգում դուք
խեղճութիւն, աղքատութիւն չէք տեսնում:
Մասնաւորապէս տօն օրերին, երբ ամենքը համա-
րեա միակերպ են հազնվում, դժուար է որո-
շել սովորական գիւղացու, բանաւորին՝ նրա
կողմէն նստած բուրժուալից: Այստեղ, Իտա-
լիայում, թէեւ օրը կիրակի է եւ իւր թէ ժո-
ղովուրդը տօնական զգեստներ ունի, բայց
աղքատութիւնն ակնբեր է: Հիւսիսի մի սառ-
նափրտ ժողովուրդը այսպիսի խեղճութեան
մէջ գուցէ կը լինէր, կամ Թուրքիայում կը վըշ-
վար, իսկ այս ամբողջը, տաք ու կրքոտ,
ծիծաղում է, երգում, աղմկում:

Տիրույթների չիտուկների խեղճող ծուխը չը
կայ, բայց նրան փոխարինել են նոր անա-
խորժ հանգամանքներ—բանաւորները հարբած
են վաղ առաւօտ է, թէ երբ են նրանք ժա-

մանակ գտել հարբելու, դժուար է տեսլ, բայց
երեւի ամբողջ չարաթ չարչարված մարդը
դուրաճութեան իր առանձին կանոններն ունի:
Բանաւորներից մէկն ուղում է անպատճառ իր
զուլում դնել հարեւան կնոջ ուսին, վերջինս
բողբոքում է. բանաւորի փոխը չէ այդ, նա հան-
գարտութեամբ տեղափոխվում է իր ուղածի
պէս. կինը ստիպված է զիջել ընդհա-
նուր քրքրի մէջ, ոչ ոք այդ բանից չէ վըր-
դովում: Միւս բանաւորը, չը գիտեմ ինչու,
որոշել է բաց պահել կից վագոնի դուռը եւ
ճշում է այնտեղից ներս, միւս կողմից փա-
կում են ուսով, նա կրկին բաց է անում եւ
ճշում. աղմուկն անտանելի է:

Այս աղմուկը եւս աւելի անախորժ է դառ-
նում կանանց բարձրաձայն խօսակցութիւնից:
Իտալացիք արեւելիների նման ցածր ձայնով
եւ կամայք խօսել, վիճել չը գիտեն, եւ ինչ
հնչուն, զիլ ձայն ունեն այս կանայք. ակունջ
է ծակում: Բայց անա նրանք լռեցին. իմ կող-
քի կինը շտապով դէպի իրան քաշեց 6—7
ապրեկան աղջկան եւ անպատճառ ուղում է
նստեցնել իր ծնկան վրա: Երեւի, եւ զար-
մացած են վշտացած, չէ կամենում իր տեղը
թողնել եւ մօր ծնկան նստել, մայրը էլ ա-
ւելի պնդում է եւ բռնի կերպով նստեցնում
է նրան իր գրկը: Եւ հետաքրքրված նայում
եմ եւ մնացել եմ զարմացած, թէ ինչու այս
կինը ճշում է երկաթի աղտոտութիւնը, պա-
րաստովում եմ հարցնել, բայց նոյն բօլբէին
պաշտօնեան ներս է մտնում եւ տոմսակներ է
պահանջում: Պաշտօնեան հեռանում է եւ կինը
կրկին երեւալին նստեցնում է իր նախկին տե-
ղում. խնդրը պարզվեց, պրկում պահելով 6—7
տարեկան աղջկան, խորամանկ կինը կարողացաւ
նրան տարիքից աւելի փոքր ներկայացնել եւ
տոմսակ գնելուց ազատվել: Կարեկցութեամբ
եմ նայում այդ փոքրիկ երեւալին, որ զար-
մացած նայում է իր շուրջը եւ չէ հասկանում
մօր արածը, չը գիտէ, թէ իր գլխով ինչ կա-
տարվեց, չէ էլ կասկածում, որ ինքը իր բո-

լոր միամտութեամբ, իր բոլոր անմեղութեամբ
գործակից եղաւ մի կեղծիքի, մի խաբէու-
թեան. եւ ինչ լաւ, որ չէ հասկանում այդ.
որքան բազմաթիւ են հասակաւորների այն-
պիսի գործողութիւնները, որ եթէ փոքրիկնե-
րը երեք չը տեսնէին եւ երբեք չը հասկա-
նային աւելի լաւ կը լինէր: Կարեկցութեամբ
եմ նայում մանաւանդ մօրը, այդ ողորմելի
գեղջկուհուն, որը իր կարօտութեան, իր խեղ-
ճութեան մէջ գործութիւն յանձն առաւ: Աչ-
խարհում մեծ մասամբ կարիքն ու յանցանքը
մեծը մեծը քան անհատն է ընթանում, ոճիրները
շատ յաճախ ծնունդ են առնում մուծ նկուղ-
ներից, խաւար դեռնափորներից, խալիների
վրայից, ցնցոտիների միջից. քաղցից դալարվող
ստամոքսը անունդի տեղ թոյն է քամում
մարդկային երակները մէջ եւ տանջված զուլ-
ները, տառապանքներից չլսած, կեղծիքի, խա-
բէութեան եւ յանցանքների մէջ են փնտռում
մի ելք, մի հնարք: Ո՛վ է յանցաւորը...

Իմ դէմ ու դէմ նստած օրիորդը աւելի եւ
աւելի է հետաքրքրվում ձեռքիս ֆրանսերէն
գրքով եւ վըշլ ի վըշլով ինչդուր է նայել:
Խաղաղահին չէ ճնշվում օտարից: Եւ սիրով
մեկնում եմ նրան գիրքս. նա սկսում է կար-
դալ իտալական արտասանութեամբ, անգաղա-
հարցեր է ուղղում ինձ, աստիկ ուրախանա-
լով, որ ինքն իտալուհի լինելով կարողում է,
նոյն իսկ հասկանում է ֆրանսերէն իր մայ-
րենի լեզուի օգնութեամբ, եւ իր գոհունա-
կութիւնն արտայայտում է բարձրացոյց բա-
ցականչութիւններով ու քրքրիով: Ծանապար-
հորդութիւնս մի քանի կերպարանափոխվում է
զաստաւութեան. ինչ աւելի լաւ միջոց ձանձ-
րոյթը փարաւաղելու. եւ մտքիս մէջ օրհնում եմ
իտալական պարզութիւնն ու բացարձակութիւնը
եւ այնպէս զբաղվում, որ չեմ նկատում վա-
գոնի միւս անկիւնում պատրաստվող փոթո-
րիկը:

Երեք բանաւորներ կան այնտեղ. ինչ որ
պապանալից դիքը են ընդունում նրանք. Իտա-

սուս են վրացերէն, մի քանիսն կը գրում եւ կարդում են վրացերէն. համարեա բոլոր վրացիները խօսում են հայերէն: Միասին, միասնաբար կենք վարել մշակել է նրանց մէջ մի եւ նոյն արժանաւորութիւնները, մի եւ նոյն պակասութիւնները: Բնորոշեցէ՛ք Ախալքալաքի դատարի վրացուն, — դա մի եւ նոյն ժամանակ կը լինի եւ հայի բնորոշումը: Վախառուներ կան թէ վրացիների եւ թէ մանաւանդ հայերի մէջ: Բայց վախառու ոչ մի ազգայնութեան ներկայացուցիչ չէ, նա կոսմոպոլիտ է: Եղբայրական յարաբերութիւնները երկու ազգերի մէջ չափ եւ չափ զգալիութեամբ են արտայայտուում, հայն էլ, վրացին էլ ուխտ են գնում մի սրբատեղի, վրացի հիւանդի մօտ հայ քահանայ են տանում: աղօթք կարդալու: Երկրաշարժի ժամանակ վրացիներն էին հայերին ամենից շատ օգնողները:

Ձը կայ ազգային թշնամութիւն, բայց կայ դասակարգային թշնամութիւն: Վրացիների մէջ արագ զարգանում է բուրժուական, բազմա- ցած մասն կապիտալիստների, հայերը ունեն աւելի մեծ բուրժուական դասակարգ, որ աւելի խոշոր դրամագրութիւնների ներկայացուցիչ է: Անա այդ երկու դասակարգերն են ընդհարում իրար հետ, բայց այդ ընդհարումն էլ երկար չի տևել, որովհետեւ բուրժուա դասակարգը ազգայնութիւն չէ ճանաչում, նրա շահերը եւ ձգտումները մի են բոլոր ազգերի մէջ. հետեւաբար, վրացի բուրժուական էլ, հետզհետեւ աւելի զարգանալով, աւելի խոշոր կապիտալի տէր դառնալով, պիտի միանայ հայ բուրժուականի հետ, ինչպէս այդ տեղի է ունեցել ամեն տեղ: Հեղինակը այնուհետեւ մի համոզում, բայց շատ լուրջ պատմական տեսութիւն է անում հայերի եւ վրացիների յարաբերութիւնների մասին, որ միանգամայն պատիւ է բերում նրա բնորոշութեանը: Անցնելով մէջ, ասում է նա, չէ եղել ազգայնական թշնամութիւն հայերի եւ վրացիների մէջ: Երկու ազգերը պարզ են միասին եւ հայերն էլ քիչ արիւն չեն թափել Վրաստանի համար, եղել են նոյն իսկ հայ թագաւորներ Վրաստանում: Ժամանակի ընթացքում հայի եւ վրացու դերերը այսպէս բաժանվեցին. առաջինը գլխաւորապէս առեւտրական դասակարգ կազմեց, իսկ երկրորդը — գլխաւորապէս հողագործ դասակարգ: Մինչեւ XIX դարի սկիզբը, այսինքն մինչեւ Վրաստանի քաղաքական մար, վրացի ֆեոդալը ապրում էր իր գեղում եւ ոչինչ պակասութիւն չէր գտում: XIX դարի ընթացքում փոխվեցին պայմանները, կենսաւ կենսորոշացաւ քաղաքներում, ծնվեցին ուրիշ պահանջներ: Հողատէր ազնուականութիւնը փողի կարիք ուներ. այդ կարիքը աւելացաւ ճորտութիւնը վերացնելուց յետոյ: Փողը տալիս էր հայը, բայց եթէ չը լինէր հայ, եթէ հայերի մօտ ոչ մի հարստութիւն չը լինէր, վրացի ազնուականը փողի կարիք չէր զգայ: Ի հարկէ, ոչ: Նա ստիպւած կը լինէր ուրիշներից վերցնել: Այստեղից ահա առեւտրութիւնը փող առնողների եւ փող առողների մէջ: Բայց նկատեցէ՛ք, զրանք դարձեալ ազգութիւնների չեն, այլ ազգութիւնների որոշ դասակարգեր: Տեսէ՛ք ինչպէս է վրացի հողատէրերի դրութիւնը:

Յետ նայելով, նրանք մօտիկ անցնելու մտնում են իրանց ուժեղ եւ ազդեցիկ, իսկ այժմ թուլացել են, ապագան աւելի վառ բան է խոստանում: Ձը հասկանալով պատմական զարգացման անհրաժեշտ օրէնքները, նրանք իրանց չղկապատողների մէջ են իրանց յետամնացութեան պատճառները որոնում եւ յարձակում են վաճառականական դասակարգի վրա, իրանց անկումը վերադրում են հայ վախառուներին, իսկ բոլոր հայերին համարում են վրաց ազգութեան թշնամի: Այսպէս է դասակարգային հոգեբանութիւնը. մի դասակարգը իր անձնական վիշտը եւ զոքազոքութիւնը հրատարակում է ազգային վիշտ եւ զոքազոքութիւն, իր անձնական թշնամուն — ամբողջ ազգի թշնամի...:

Հայերի մէջ էլ կայ, ի հարկէ, այդ դասակարգային հոգեբանութիւնը: Բայց, ինչպէս շատ իրաւացի կերպով նկատում է հեղինակը, հայերի պահպանողական տարրերը պատմութեան մէջ տեղի են տալիս նոր տարրերին եւ նրանք չեն կարող ամբողջ ազգի ներկայացուցիչը դառնալ: հայ հասարակութեան պահպանողական — չօվինիտ մասը — դա հայ ազգութեան անհետացող, մեռնող մասն է: Ահա առողջ միտքը, արդար, հիմնաւոր դատողութիւնը ինչպէս է խօսում: Մենք հաւատացած ենք, որ վրաց ազգի մէջ ապագան այս մաքուր է, որովհետեւ եւ, ազատ լինելով ազգային նախապաշարմունքներից, չօվինիտական տենդերից, մենք անկեղծ կերպով, ամբողջ սրտից, յանուն մեր հայրենիքի բարօրութեան, յանուն ազգերի եղբայրակցութեան, ողջունում ենք նրան, այդ առողջ, թարմ եւ կենդանաբար միտքը...

ՌՈՒՍՍԻ ՔԱՏՐՈՒՆ

Չորեքշաբթի, յունիսի 6-ին, Մոսկվայի կայսերական Փոքր Թատրոնի դերասանների ընկերութիւնը ներկայացրեց «Իգիտ» դրաման, որ փոխադրութիւն է Դոստոեւսկու համանուն վէպից: Նորութիւն չէ, որ առնաստարակ չէ աշուղովում վէպը վերածել դրամայի: Վիպասանը իր գրեւոր ձեւն ունի, դրամատուրգը՝ իրը, եւ վէպից դրամա ձեւել նոյնքան դժուար է, քան սերտուկից՝ ֆերսը: Մոսկվայի «Իգիտ»-ը, այնու ամենայնիւ, շատ հետաքրքիր պիէս է, որովհետեւ իրիօլի եւ Սուտուգինի մկրատը բանել է աշխարհիս ամենախոշոր տաղանդներից մէկի տուած նիւթի վրա: «Իգիտ»-ը Դոստոեւսկու ամենաաշուղ վէպերից չէ եւ գրված է շատ շտապ կերպով, ստացած կանխավճարի խթանի տակ: Ինքը հեղինակն էլ գոհ չէր իր գրութեանը: Մոսկվայի վէպի գաղափարը բնութիւն էր հեղինակի հիւանդոտ, բայց սիրող սրտի ամենանտիրական խորքերից: Եւ շատ տեղ զգացվում է այն գրիչը, որի արտադրութիւնները այժմ հոգեբոյժները յանձնարարում են իւր գիտական նիւթ հոգեկան հիւանդութիւնների ուսումնասիրութեան համար: Այդ բոլորից մի քիչ քան մնացել է եւ դրամայում եւ սակայն այդ քիչ բանն էլ բաւական է, որ «Իգիտ»-ը հազար անգամ աւելի զօրեղ տպաւորութիւն գործի, քան նոր դրամատուրգների բոլոր գրականական թիւումները: Դրամայի հետաքրքրութիւնը կենտրոնացնում է Նաստասիա Ֆիրիլովնա Բարալկովայի սիրայի վրա: Նաստասիա Ֆիրիլովնան այն կանանցից է, որոնք նոյն Դոստոեւսկու «Կարամազով եղբայրներ»-ի Գորչուպի նման, ինչ որ առանձին «գեղծ» ունեն իրանց մէջ, որ խելքահան է անում: Եղբայրներից: Այդպիսի կանայք յաճախ դառնում են պահուկ: Կին, ինչպէս ասում են լինում միտ, եթէ չեն դառնում լաւ պատասխարած տեղում: Եւ ինչպէս երբեմն պատահում է կենսաբան ու շատ յաճախ Դոստոեւսկու վէպերում, այդպիսի կանայք հոգին բողբոջում են թաղվում, ցխի մէջ եւ պահում է իր խորքում անարատ սիրոյ պահանջ, մարդկային վերաբերմունքի անսպառ փափագ: Այդպէս էր Դոստոեւսկու «Կարամազով եղբայրներ», այդպէս է Նաստասիա Ֆիրիլովնան: Նա աւելի մեղմ է եւ ամուսնովնտալ, սակայն բուն ու քրկակից, բայց երկուսն էլ հաւատարմապէս թշուառ են եւ հաւատարմապէս համակրելի: Իրանց ընտանիքի խորքերում, ուր չեն թափանցել կեղտոտ կենսից գրողի հետքերը:

Այդ գծերը դերը անպայման տաղանդով կատարեց Եւալովնա: Իշխան Միշկին ասում է, թէ ինքը Նաստասիա Ֆիրիլովնային սիրում է «կարեկցութեան սիրով»: Այդպիսի սիրով է սիրում նրան եւ հեղինակը, որ ուզեցել է նոյնպիսի զգացմունք ազգի եւ իր ընթերցողներին: Եւալովնայի դարձեցում է այդ զգացմունքը հանդիսատեսների մէջ: Եւ այդ առաջին տպացոյցն է, որ նա ճիշդ է բնութիւնը եւ ճիշդ է կատարում դերը: Առանձնապէս լաւ էր դերասանուհին երրորդ գործողութեան մէջ, ուր իր խաղով ցնցեց հանդիսատեսներին շղերը, ինչպէս այդ պահանջում է Դոստոեւսկու «Եւալովնա» տաղանդը (ЖЕЛОВАЛЬ ТА-ЛАВЬ): Մեղ թուում է միայն, թէ սկզբում Եւալովնային երեսին չէ երեւում այն «տանջանք», որ այնքան տպաւորութիւն էր գործել իշխան Միշկինի վրա նոյն իսկ նրա պատմութեան Թերեւս այդ բացատրումով է չը- նորհալի դերասանուհու դէմքով, որ աւելի անտիք: Կրասիկական դէմք է, քան նորատիպ, եւ որ շատ լաւ արտայայտում է անդորր բզ- գացմունքները եւ նոյն իսկ ուժգին յուզմունքներ, բայց դժուարանում է ապ այն խեղա- թիւր գծերը, որոնց մէջ արտայայտում են շղերը, Էրեւնդոտ շղերը: Միւս մեծ է թերեւս աւելի դժուար դերը (Իշխան Միշկինի) կատարում էր Վասիլիսկ, որ իր գրիմով վերին աստիճանի իդիոտական կերպարանք էր տուել իրան, մինչդեռ Դոստոեւսկի յանձին իշխան Միշկինի ուղեցիլ է պատմութեան մի զգեցելի ընտանիքի, որ ծննդից չէ Դոստոեւսկու զարթեցում իր թշուառութեամբ, ինչպէս Ժան Վալտան: Այնպէս, ինչպէս Վասիլիսկի ներկայացում է «Իգիտ»-ը իշխան Միշկինին, անհասկանալի է դառնում Նաստասիա Ֆիրիլովնայի եւ Ալլաիս Եպանիմայի վերաբերմունքը դէպի նա: Մեղ թուում է, թէ Միշկինին պէտք է ներկայացնել անցած շղային հիւանդութեան հետքերով, չաղված աչքերով եւ մտքամոլոր, բայց ոչ բոլորովին իդիոտ: Եւ անհասկանալի կանայք ամբողջում աշուղական մարդկանց աշ-

ուս աշուղան էլ բաւական է իդիոտ կամ, ինչպէս մեզնում ասում են, «գորմա» համարվել: Եւ համար. Մոսկվայի պէտք է խոստովանել, որ Վասիլիսկի իր սխալ վերցրած տոնով այդ վերին աստիճանի դժուար դերը տարաւ շատ հետեւողական կերպով եւ մեծ չորհրդով: Դոստոեւսկու երրորդ էական դերը (Պարֆիւս Բոգոմիր) կատարում էր Պապարին, որ մի քանի գործողութեան ընթացքում միջակ տանելով իր դերը, վերջին գործողութեան մէջ հասաւ գեղարուեստական ճշմարտութեան բարձր աստիճանի: Խմբի ղեկավարի, Պարֆիւսի դերն էլ մեծ դեր էր (Արդալիս Իվոզին), բայց այդ դերը դրամայի հետ օրգանական կերպով չէ կապվում, Իվոզինի ճակատագիրը չէ հիւսնած գլխաւոր հերոսների ճակատագրի հետ: Այդ է գուցէ պատճառը, որ տաղանդաւոր դերասանի խաղը աւելի քիչ տպաւորութիւն գործեց, քան կարելի էր սպասել: Միւս գերակատարներից առանձնապէս լիչելու է իլինկուս (Պանեա), որ հարթ չէր խաղում եւ միայն երբեմն-երբեմն որ տպաւորութիւն գործում, Լազարիլին, որ վատ չը տարաւ Ֆերդինանդի դերը, եւ Արեւիկային, որ տէմպէրաւ մեծ ցոյց տուեց իր բաւական անընտան դերում:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՔՐՈՒԹԵԱՆ

(Յարունակութիւն)

Պ. Տ. Յ. հարցնում է, «Եթէ հաշուապահ էլ այն կարծիքին լինի, թէ դա զեղծումն է, դուք կը յայտնէք այդ բանը ձեր գեղարուեստ մէջ»: Այնքան տեղի հարց է, որ բնաւ պատիւ չեն անի պատմական ձեռք ուղղելու, այլ դատաւարով «Մշակի» ընթերցողներին, կասեմ, որ եթէ ցանկութիւն չունենայի գեղարուեստ, հարաւորութիւն չայի, անաչառ անելու, հաշուապահան: Եթէ յանձնի մասնագէտի քննութեան, եւ կոսմոպոլիտի դեռ մարտի 21-ին տուած ի յայտարարութեան մէջ չէի գրել, «Եւ կը ինչ ինչում եմ չը խնայել ոչ ժամանակ եւ ոչ դրամ հաշուապահները մասնագէտների վերլուծութեան ենթարկելու համար: Սրանով եւ կը կամենայի նոյն իսկ իմ գիտողութիւնները կողմնալի մասնագէտի ստուգատեսութեան ենթարկելու լինել: որովհետեւ մտածում եմ, որ կարող է պատահել, որ մի կողմից Երեւանի եւ Թիֆլիսի թեմերի շատ երէցիկները վարած-պահած հաշուապահներին հետ մօտ ծանօթութեան, միւս կողմից հոգեւոր իշխանութեան պատուիրներին անսխալ հաշուապահների անտեսի հակառակելը, ինչպէս եւ 70-ամեակ երէցիկների (վաղաժամ կերպով) անուանարկված դրութիւնը միացած թեմիս ազգած լինեն ինձ վրա բաւական անաչառութեամբ չը վերաբերվելու կամ անտեղի ներողամտութեամբ նայած լինելու մատենաներին: Բայց դրանից եւ ամեն տեղ ասել եմ, որ իրողութիւնները, կողմերի գոյցմունքները, այլ եւ այլ մտածանքների ու ընկալողների արձանների ու կտորների զանազանութիւնները եւ այլն, ինչպէս որ կան, իմ կարծիքների ու լուսաբանող պարագաների հետ պարտաւոր եմ գրի անցնելու եւ ներկայացնելու նախ ծիսկան ժողովի եւ ապա հոգեւոր իշխանութեան դատաւարներին: Դատաւորը նրանք են ոչ քննիչը: Նրանց իրաւունքն է արան կամ նրան արդար կամ մեղաւոր ճանաչելը, իմ գեղարուեստը բաւարար կամ թերի, ընդունելի կամ խոտելի համարելը:

Հաշուապահներ իրանց կողմնականներով համարում են ինձ պաշտպան երէցիկներ այն պատճառով, որ եւ ծիսկանի ու ժամանակի հարցեր եւ յարուցել, որ զոք եւ հաշուապահների ընտրութիւն անկանոն, որ ասել եմ թէ երէցիկի վերաբերութեամբ հասարակական վատթար համոզում են կազմել տուել: Եւ վերին աստիճանի թեմեամբ միջոցներով, որ հաշուապահների կողմից երէցիկների գող, կաշնող, յափշտակող լինելու մասին անվիճելի ճանաչված փաստերը տակաւին բաւականաչափ չեն կշռադատված եւ շատ հեռու են անվիճելի փաստեր համարվելուց, եւ որ այդ մասին վճիռ արձակելու իրաւունք ունեցողները չեն հաշուապահները, այլ այդ իրաւունքը դատաւորներին է, որոնք կարող են եւ այսպէս եւ այնպէս ընդունել ու վճել:

12 անձնայ հաշուապահներին ընտրող ժողովը իր արձանագրութեան մէջ նրանց գործունէութեան օտմանը որոշել է այս բաներով. «Երեսուրեց 12 հոգաբարձու, որոնք կը ընեն... երէցիկի պ. Միկոյի Մուրաբանի ներկայացրած հաշիւները եւ այս մասին իրանց կարծիքը կը յայտնեն ծիսկանների ընդհանուր ժողովին... երէց փոխի հաշիւները պէտք ան պարել եւ բաժանել ծիսկաններին»:

Նրանք յուլիսի 9-ին ընտրված հաշուապահները չը սպասած իրանց հաստատութեանը, չը սպասած երէցիկի հաշիւ ներկայացնելուն, յուլիսի 12-ին, 12 հոգով գործակալի հետ գրեցող պահանջել եւ ստացել են երէցիկների ընտ-

*) Ծանօթ. Այս վկայում է լաջորդը, գրելով իր պաշտօնական յայտարարութեան մէջ. «Եթե ի բացակայի» ունեցի ի նոյնանէ (ի նշանակում) տարածելու եւ գտնելու համար գեղարուեստի ներքին զմայն մի ժողովրդեան ընդդէմ նորաւ:

յոր տարիների, մինչեւ անգամ եւ 1900 թ. կէս տարի վարած իսկական ու սեւագիր մատենաները եւ անվիճապէս ձեռնամուխ են եղել քրեանութեան:

Նրանք հաշիւների մասին իրանց դիտածները, այլ եւ այլ պահանջները, բողոքները, մեղադրանքներն ուղղել են կոսմոպոլիտ, բնաւ ոչ չը դարձնելով, որ այդ մասին լիազօրած չէ եղել իրանց ընտրող ժողովը, ուստի եւ իրանք բողոք ծիսկանի ժողովից իրաւունք չունեն այլ ոչ ոքի հետ յարաբերութեան մէջ մտնելու: Կոսմոպոլիտներ ներս է գալի սրանց բողոքները հաշիւների մասին ներկայացրածները քննելու իր լիազօրի ձեռքով: Սրանք բարկանում են: Այնպէս որ սրանց հասկացած օրէնքով իրանք իրաւունք ունեն դիմումներ անելու, բողոքներ ու պահանջներ անելու հոգեւոր իշխանութեանը, իսկ վերջինս իրաւունք չունի նրանց բողոքների, նրանց ներկայացրած գողութիւնների ու զեղծումների մասին քրեանութիւն օտմանելու:

Տ. Յ. երբ գրում է «Մշակի» 89 №-ի մէջ, «Արաւելիացիներին մի բան է մնում անել — ծիսկանների մի նշանաւոր մասին տոտրագրութեամբ...»: Այստեղ հաշուապահները նշանաւոր մասը խօսքերը չեն թաղարմանում: Եւ այս, հարուստ, իսկ երբ նոյն բանը եւ եւ գրում, ասելով՝ «Հասարակութեան շատ նշանաւոր մասը բացակայ, անխառն է եղել», նրանք իրանց ընտրող լատիկութեամբ իրանց պարզամտութիւն հաւատարմութեանը գրեւոր մտքով իմ ճշմանաւոր խօսքը աղա են միկնում («Մշակի» № 101): Եւ սա ազնուութիւն է:

Յանուն ժողովրդական իրաւունքների նրանք իրանք եւ իրանց պաշտպանի բերանով բողոքում են, որ հոգեւոր իշխանութիւնը իրը թէ լիազօր քննիչ նշանակելով, գրել է նրանց ծիսկան ժողովին իրանց հաշիւ ներկայացնելու իրաւունքից: Սա սխալ է. հոգեւոր իշխանութիւնը նրանց չէ կազմաւորեց: Նրանք, եթէ վերջացել են իրանց հաշուապահները, պարտաւոր են երէցիկների հաշիւները տպագրութեամբ հրատարակելու եւ ծիսկանների մէջ բաժանելու: Կրկնում ենք — թիղ նախ կատարեն այդ պարտաւորութիւնը, թիղ թեմականներով ցոյց տան երէցիկների 9000 բողոքը աւելի գողութիւնը եւ նոր այն ժամանակ վերջացած կը լինեն իրանց պաշտօնը: Այն ժամանակ ծուխը ինքը իր իրաւունքով եւ ծիսկան ժողովը կը պահանջէ, եւ իր դատաւարանը կանէ:

Իմ համոզմունքով՝ իւրաքանչիւր մի անհատ, երբ իրան իսկապէս ճշմարտութեան իրանցից է համարում, պարտաւոր է նկատված անձնութիւնը, սխալ, ինչպէս ներկայ հանգամանքում 12 հոգաբարձուների ընտրութիւնն է, երբ էլ երեւան հանդի, պարտաւորապէս թեմը ընդունելու. այսպէս ժամանակի անցած ու ընդհանրապէս արդէն հաստատված լինելու պատճառով անհատապարհ պարտաւոր են անհատապարհ իրաւունքները, պարտաւոր են անհատապարհ իրաւունքները, պարտաւոր են անհատապարհ իրաւունքները, պարտաւոր են անհատապարհ իրաւունքները, պարտաւոր են անհատապարհ իրաւունքները:

Եւ այսպէս ժողովրդական իրաւունքների անունով գործող հաշուապահներ իրանց ինքնապաշտպան զինուորներով զէպի հոգեւոր իշխանութիւնը, ճանապարհ բաց արին հոգեւոր քննիչի գալուստ, եւ մնացին արդար. այժմ էլ, ինչպէս լուսն ենք, սուտ թէ ճիշտ չեմ երաշխաւորում, նրանք դարձեալ ինքնապաշտպան, առանց ծիսկանի ժողովից լիազօրութիւն ստանալու, արդէն դիմել են մարմնաւոր իշխանութեան, որով եւ ճանապարհ են բաց արել աշխարհական քննիչի գալուստ, դարձեալ մնում են արդար: Սպասենք հետեւանքին:

Լիազօր քննիչ՝ Մեսրոպ քահանայ Մեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անդրկովկասեան երկաթուղու Գանձակ կայարանից մեզ հեռագրում են. «Յունիսի 6-ի գիշերը, լոյս հիւզաբերի, Գանձակ եւ Քիւրեակայ կայարանների միջեւ խորտակումն տեղի ունեցած վերջին կայարանից չորրորդ վերադարձ: Մի ապրանքատար գնացքից անկատելի կերպով պոկ էին եկել մի քանի վագոններ: Այնուհետեւ եկող նախադասար գնացքը ընդարձակ էր այդ վագոնների հետ: Մարդկային զոհեր չեն եղել: Վնասված են եւ բէլերից զուրա են եկել մի քանի վագոններ: Խորտակման տեղի կողովը ժամանակաւոր ճանապարհ է չինված գնացքների համար»:

Գանձակ եւ Քիւրեակայ կայարանի միջեւ տեղի ունեցած խորտակման պատճառով Բազուից Թիֆլիս եկող եւ Թիֆլիսից Բազու գնացող գնացքները ուշանում են: Այսօր մարդատար գնացքը Բազուից Թիֆլիս հասաւ 3½ ժամին: Կէսօրից յետոյ, մինչդեռ պէտք է զար առաւօտեան ժամի 8-ին:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ միջնակարգ դպրոցի վերակալմութեամբ զբաղվող յանձնաժողովը եռանդուն կերպով շարունակում է իր պարապմունքները: Ընդ-

Электротечатня Грузинск. Т—ва, Большая-Ваньская ул., № 72.